ՄԶՄԿ
ICHD
Մարդկային զարգացման միջազգային կենտրոն
International Center for Human Development

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԿՁԲՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

19 Մայաթ Նովա, Երևան
Հեռ.՝ +3741 58-26-38, Ֆաքս՝ +3741 52-70-82, Էլ.փոստ՝ mail@ichd.org, Ինտերնետ էջ՝ www.ichd.org

ԵՀՔ. հարաբերությունների խորացման ֆորում, թե՞ լոկ գործիք

ԵՄ ընդլայնումը նոր լիցք հաղորդեց այդ միության հավակնություններին՝ դառնալու աշխարհի մակարդակով քաղաքական և տնտեսական հզորագույն դերակատար, սակայն յուրաքանչյուր նոր անդամի ընդգրկում (հատկապես արևելյան հարևանի) հակում ունի իր հետ բերել նոր խնդիրներ թե՛ ներքին, թե՛ արտաքին հարաբերությունների ասպարեզում: Սա իր արտացոլումը գտավ ԵՄ ինստիտուցիոնալ հիմքերի ամրագրման վերջին փորձի փաստացի տապալմամբ՝ ցույց տալով, որ «Ընդլայնված Եվրոպա» հայեցակարգը խմորվելու զգալի ժամանակ է պահանջելու: Ուստի և նշված հայեցակարգից բխող Եվրոպական հարևանության քաղաքականությունը չի կարող բոլոր հարևանների համար միաձև և միևնույն չափսի «շապիկ» հանդիսանալ, այդ թվում նաև՝ այն երկրների համար, որոնք արդեն իսկ արտահայտել են «դեպի Եվրոպա» իրենց քաղաքական դիրքորոշումը և ինստիտուցիոնացրել են իրենց հարաբերությունները Գործընկերության և համագործակցության մասին համաձայնագրի շրջանակներում: Ուստի այս համատեքստում ԵՀՔ ընկալումը դառնում է չափազանց խրթին. այո՛ մենք դեպի Եվրոպա քաղաքական կուրս ենք վերցրել, սակայն ի՞նչ խնդիր է լուծում Եվրոպական հարևանության քաղաքականությունը:

Որոշ երկրներ հապշտապ որոշումներ նոր նախաձեռնությունն ու հավանության արժանացին ԵՀՔ գործողության ծրագրերը (ԳՕ): Այնուհետև սակայն մի պահ դադար առնելով անդրադարձ հայացք գցելով այդ ողջ գործընթացի վրա, պարզեցին, որ այն անորոշությունից բացի, կարծես, ոչինչ չի առաջարկում: Օրինակ՝ Ուկրաինային և Մոլդովային առաջարկված ԵՀՔ ԳՕ նախագիծը հասարակության բազմակողմանի ներկայացվածությունից զուրկ, նրա սեփականությունը չհանդիսացող և տեղական առանձնահատկությունները հաշվի չառնող մի փաստաթուղթ էր, որը Եվրոպան ուղղակի ներկայացնում է միայն մի խումբ բարձրաստիճան պաշտոնյաների: Նրանք էլ հմայված Եվրոպայի քաղաքավարի ժպիտով՝ ստորագրում են այն և հետո միայն ձեռնամուխ լինում պարզաբանելու, թե ինչ են դրանք առաջարկում իրենց երկրներին և ժողովուրդներին: Արդյո՞ք ԵՄ անդամակցություն: Պատասխանը չափազանց անորոշ է:

Այսպիսով, այն հույսը, թե ԵՀՔ մի նոր ֆորում է առաջարկելու Եվրոպայի հետ ավելի սերտ հարաբերություններ զարգացնելու համար, այժմ կարծես թե իր տեղը զիջում է այն մտքին, թե ԵՀՔ-ն ընդամենը մի գործիք է՝ փակելու դեպի Եվրոպա ազատ մուտքը:

Ի՞նչ կտոր ենք ուզում Եվրոպական կարկանդակից

Արդյո՞ք Հայաստանն էլ նույն կերպ է ընկալում ԵՀՔ-ն: Կախված թե, որ կողմից ենք մոտենում հարցին՝ պատասխանը տարբեր կերպ է հնչում: Համաձայն մոտեցումներից մեկի՝ ԵՀՔ-ն իսկապես խոստումնալից ֆորում է, որը հնարավորություն է ընձեռելու առավել սերտ հարաբերություններ զարգացնել Եվրոպայի հետ: Բացի քաղաքական և տնտեսական հեռանկարներից, ԵՀՔ-ն հնարավորություն է ընձեռում.

- իրականացնել ներքին բարեփոխումներ՝ հիմնվելով ակնկալվող ֆինանսական և տեխնիկական աջակցության վրա,
- մոբիլիզացնել ներքին ռեսուրսները,
- ամրագրել Եվրամությանն ինտեգրվելու պրակտիկան Հայաստանի արտաքին քաղաքականության մեջ,

- տարածաշրջանային սահմաններից դուրս նայել և քաղաքական երկխոսություն զարգացնել մի շարք կարևոր գործընկերների հետ, որը թույլ կտա ձևավորել դրական պրակտիկա միջազգային քաղաքական պարտականությունները կատարելու ասպարեզում:

Մինչդեռ, այդ մոտեցման ընդդիմախոսները վիճարկում են վերոհիշյալ փաստարկները՝ նշելով, որ Հայաստանը որևէ ծրագիր իրականացնելու համար երբևէ ֆինանսական միջոցների պակաս չի զգացել: Նրանք անվստահություն են հայտնում նաև այն համոզվածությանը, թե ԵՀՔ ներգրավվածությունը կապահովի ներքին ռեսուրսների համխմբում, քանի որ Հայաստանին դա դեռևս չի հաջողվել:

Ավելին, առաջինները գտնում են, որ Հայաստանը պատրաստ է բանակցային գործընթացին, որը կարող է սկսվել ցանկացած պահի, այն բանից հետո, երբ եվրոպական կողմը հետաձգեց սեպտեմբերին կայանալիք գործընթացը: Հայկական կողմը հստակ գիտի, թե ինչպիսի զիջումներ կարելի է անել և որտեղ պետք է զերծ մնալ որևէ զիջումից: Ընդդիմախոսները, սակայն, համոզված են, որ այս հայտարարությունը անհիմն է, քանի որ ուղղակի անընդունելի է բանակցել ժողովրդի անունից, երբ վերջինս մեծ հաշվով անտեղյակ է, թե ինչի մասին է այս ողջ գործընթացը: Որտե՞ղ է հասարակական կարծիքը: Արդյո՞ք այն որևէ կերպ արտացոլված է առաջինների լավատեսական ակնկալիքներում: Այս հարցերը դեռ սպասում են իրենց պատասխաններին:

Այսպիսով, թե ինչ կտոր ենք մենք ուզում «եվրոպական կարկանդակից», դեռևս անորոշ է:

Ակտիվներ և պասիվներ

Եթե Հայաստանը մասնակցելու լիներ Եվրոպային ինտեգրվելու համար հայտարարված մրցույթին, ինչպե՞ս կարելի էր ներկայացնել «ընկերության» ակտիվներն ու պասիվներն այնպես, որ այդ նկարագիրը «դիմորդի» հանդեպ դրական և բարեհաճ վերաբերմունք ձևավորեր:

<u>Ակտիվներ</u>

- ցանկություն և պատրաստակամություն ինտեգրելու եվրոպական չափանիշները,
- իր շահերի սահմանման և ներկայացման գործընթացում ցուցաբերած անկախություն,
- եվրոպական ինտեգրացման գործընթացում նախկինում արձանագրված դրական պրակտիկա
- հավասարակշռված և իրատեսական հավակնությունների ներկայացում:

<u>Պասիվներ</u>

- ԳՕ-ի ձևավորման գործընթացում առավել մասնակցային մոտեցման ապահովում,
- Եվրոպայի ճիշտ մատուցում հայ հասարակությանը և, ընդհանրապես, Եվրամության մասին հասարակական տեղեկացվածության ապահովում,
- բանակցային գործընթացի արդյունավետ նախապատրաստում՝ թիմի և հստակ նպատակների ձևավորում,
- եվրոպական ինտեգրման խնդիրներով զբաղվող պաշտոնական մարմնի (համակարգի) ստեղծում:

Կշահե՞նք արդյոք մրցույթը՝ կախված է նրանից, թե մենք որքան խոհեմ կգտնվենք մեր ակտիվներն առավելագույն բարենպաստ լույսի ներքո ներկայացնելու և մեր պասիվներն ակտիվների վերածելու գործում:

Համառոտագիրը մշակվել է ՄԶՄԿ 2005թ-ի սեպտեմբերի 19-ի «Եվրոպական հարևանության քաղաքականություն. համագործակցության սկզբունքներ և հեռանկարներ» թեմայով քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա: Կլոր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ:

Քննարկումը կազմակերպվել էր Մեծ Բրիտանիայի Միջազգային զարգացման դեպարտամենտի աջակցությամբ: